ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-1»

ք. Երևան «26» «09» 2019 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռ. Մայիլյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանի ամրակայման, նորոգման, վերականգնման և տարածքների բարեկարգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 60-րդ օրացույցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները ներկայացված են պայմանագրի N 4 Հավելվածում:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 (երկու) օրինակ:

4.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.3 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.4 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

4.5 Եթե պայմանագրի 4.4 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կապալառուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության

կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **27480000 (քսանյոթ միլիոն չորս հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամ, որից **4580000 (չորս միլիոն հինգ հարյուր ութսուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

1-ին չափաբաժին՝ 17520000 (տասնյոթ միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ որից **2920000 (երկու միլիոն ինը հարյուր քսան հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն,

4-րդ չափաբաժին՝ 9960000 (ինը միլիոն ինը հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ որից **1660000 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 3) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված համապատասխան չափաբաժնի գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ -ն նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[3]: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և

---

[34] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

գնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 4 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Հասցեն՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն Հ/Հ 900011018927 /Դվին/, Հ/Հ 900011018901 /Սոլակ/, ՀՎՀՀ 02698732	ԱՐԹՄԱՇԻՆ» ՍՊԸ Հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության 1 նրբ. տ 8/Ա, հեռ.՝ 093743040, էլ. փոստ՝ artmashin@mail.ru Հ/Հ 2470100564110000 «Արդշինբանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 02576479
Գլխավոր քարտուղար՝	Տնօրեն՝
Ն. Հարությունյան	Ռ. Մայիլյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ

Հավելված թիվ 1

«26» «09» 2019 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-1» ծածկագրով պայմանագրի

1-ին չափաբաժին

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքների

հազար դրամ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	Վերականգնողական աշխատանքներ				
1	Պատերի ճաքերի ներարկում բարդ կրավազային շաղախի լուծույթով (հատուկ բաղադրակազմի, հավելված ջրամեկուսացում ապահովող բաղադրանյութերով) նախորոք լվալով ճնշման ջրի շիթով	լ	4730.00	1.74	8241.92
2	Խորը կարանախցում կրավազային բարդ շաղախով (հավելված ջրամեկուսացում ապահովող բաղադրանյութերով) միջին լայնությունը 10 սմ	10գծմ	32.70	13.64	446.18
3	Գետնախարիսծի կոպտատաշ քարերի քանդում վերաշարում (կոնգլոմերացված ավազաքար, կրաքար, ֆելզիտ) գինը՝ 26.0+0.079*83.34+32.58	մ^3	6.82	44.74	305.15
4	Կրաշաղախի լիցքի քանդում հեռացում ձեռքի գործիքներով	մ^3	2.62	11.63	30.40
5	Հարթ երեսապատի նոր տաշ ու շար ֆելզիտից	մ^2	29.60	101.28	2997.92
6	Հարթ երեսապատի քանդում վերաշարում տուֆ քարից	մ^2	0.62	32.98	20.45
7	Հարթ երեսապատի նոր տաշ ու շար տուֆ քարից	մ^2	58.60	67.12	3933.35
8	Որմնասյուների կրաբուտաբետոնյա հիմքերի պատրաստում	մ^3	0.90	52.83	47.55
9	ՈՒղղագիծ որմնասյուների քանդում վերաշարում կիսասրբատաշ տուֆ քարից	մ^2	2.24	24.29	54.42
10	ՈՒղղագիծ որմնասյուների նոր տաշ ու շար տուֆ քարից	մ^2	14.70	50.09	736.26
11	Խորանի միակոր քարերի նոր տաշ ու շար կիսասրբատաշ տուֆ քարից	մ^2	5.50	78.30	430.66
12	Լիցքի կատարում բարդ կրավազային շաղախի լուծույթով (հատուկ բաղադրակազմի, հավելված ջրամեկուսացում ապահովող բաղադրանյութերով)	մ^3	49.20	56.65	2787.55

13	Շին.աղբի բարձում մեքենաները և տեղափոխում 5 կմ հեռ.վրա	տ	6.70	2.91	19.49
	Ընդամենը				**20051.3**
	ԱԱՀ - 20%				4010.26
	Ընդամենը				**24061.6**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու տարածքում:

4-րդ չափաբաժին

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Մայրավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և ամրակայման աշխատանքների

հազար դրամ

N	Աշխատանքների տեսակները և անվանումը	Չ/Մ	Քանակ	Միավորի գինը	Գումարը
1	2	3	4	5	6
	Վերականգնողական աշխատանքներ				
1	Եկեղեցու շրջակա տարածքի հողի շերտի քանդում հեռացում ճակատներից 10մ հեռավորությամբ 10x 10 x 3,17 x 0,4	խմ	100.000	9.27	927.28
2	Արտաքին Ինվենտարային տախտակամածի կապում և քանդում	100Ք.մ	0.275	124.99	34.37
	Արևմտյան ճակատ			0.00	
5	Մուտքի բազալտե որմնակամարի նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	1.800	202.42	364.36
6	Մուտքի կիսաշրջանաձև բարավորի մեծածավալ քարի քանդում վերաշարում	Ք.մ	1.700	201.68	342.85
7	Հարթ երեսապատի մեծածավալ սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	3.570	69.16	246.89
8	Հարթ երեսապատի մեծածավալ սրբատաշ անկյունը կոր կտրած բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	0.500	74.48	37.24
9	Արևմտյան ճակատի բազալտե հարթ երեսապատի քարերի և անկյունաքարերի վերաշար	Ք.մ	3.300	44.55	147.02
11	Արևմտյան ճակատի բազալտե հարթ երեսապատի քարերի և անկյունաքարերի նոր տաշ ու շար	Ք.մ	1.400	142.34	199.28
12	Արևմտյան ճակատի բազալտե հարթ երեսապատի՝ անկյունը թեք կամ կոր կտրած քարերի նոր տաշ ու շար	Ք.մ	1.300	172.08	223.70

13	Բազալտե սրբատաշ անկյունը կլոր վալիկավոր մշակված նախապես համարակալված քարերի քանդում վերաշարում /բոլոր ճակատներում/	Ք.մ	2.100	90.76	190.59
14	Բազալտե սրբատաշ անկյունը կլոր վալիկավոր մշակված քարերի վերաշար	Ք.մ	2.600	66.15	171.99
15	Բազալտե սրբատաշ անկյունը կլոր վալիկավոր մշակված քարերի նոր տաշ ու շար	Ք.մ.	3.600	235.44	847.58
16	Պատուհանի բարդ կողադեմով ուղղաձիգ պսակի քանդում վերաշարում	քմ	0.150	219.42	32.91
17	Պատուհանի բարդ կողադեմով ուղղաձիգ պսակի վերաշարում	քմ	0.150	154.76	23.21
26	Հին խիստ ամրացած կրաշաղախի քանդում հեռացում ձեռքի գործիքներով	Խ.մ.	2.200	17.77	39.09
27	Լիցքի կատարում բարդ շաղախով և ճեղքած բազալտով	Խ.մ	4.300	48.45	208.32
	Հյուսիսային Ճակատ			0.00	
28	Հարթ երեսապատի մեծածավալ սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	1.500	69.16	103.73
29	Բազալտե մեծածավալ հարթ երեսապատի քարերի և անկյունաքարերի վերաշար	Ք.մ	2.300	44.55	102.47
31	Բազալտե մեծածավալ հարթ երեսապատի քարերի և անկյունաքարերի նոր տաշ ու շար	Ք.մ	5.860	145.51	852.66
40	Հին խիստ ամրացած կրաշաղախի քանդում հեռացում ձեռքի գործիքներով	Խ.մ.	2.000	17.77	35.54
41	Լիցքի կատարում բարդ շաղախով և ճեղքած բազալտով	Խ.մ	2.815	48.45	136.38
	Արևելյան ճակատ			0.00	
42	Հարթ երեսապատի մեծածավալ սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	2.60	69.16	179.81
43	Հարթ երեսապատի մեծածավալ թեք կտրած սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	0.20	74.48	14.90
45	Բազալտե մեծածավալ հարթ երեսապատի քարերի և անկյունաքարերի նոր տաշ ու շար	Ք.մ	2.40	145.51	349.21
46	Բազալտե հարթ երեսապատի՝ անկյունը թեք կտրած քարերի նոր տաշ ու շար	Ք.մ	0.60	172.08	103.25
47	Պատուհանի բարդ կողադեմով կորագիծ պսակի քանդում վերաշարում	Ք.մ	1.10	263.97	290.37
48	Պատուհանի բարդ կողադեմով կորագիծ պսակի վերաշար	Ք.մ	0.30	199.31	59.79
49	Պատուհանի թեք հարթություններով հարթ նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	1.90	74.48	141.51

50	Խորշերի անկյան հարթ երեսապատի քարերի քանդում վերաշարում	Ք.մ	1.70	68.41	116.30
53	Համանման, խորշերը ավարտող կորագիծ պսակների կոնաձև նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	1.50	120.65	180.98
54	Խորշերի անկյունային քարերի վերաշար	Ք.մ	1.00	44.55	44.55
55	Հյուսիսային կողմի երկրորդ հարկի ավանդատան պատուհանի բարդ կողադեմով կորագիծ պսակի վերաշար	Ք.մ	0.40	199.31	79.72
59	Հին խիստ ամրացած կրաշաղախի քանդում հեռացում ձեռքի գործիքներով	խմ	2.25	17.77	39.98
60	Նոր լիցքի կատարում խամքարով՝ բարդ կրաշաղախով	խմ	2.50	48.45	121.12
	Հարավային ճակատ			0.00	0.00
61	Հարթ երեսապատի մեծածավալ սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	4.07	69.16	281.47
63	Բազալտե մեծածավալ հարթ երեսապատի քարերի և անկյունաքարերի նոր տաշ ու շար	Ք.մ	7.68	145.51	1117.48
76	Նոր լիցքի կատարում խամքարով և բարդ կրաշաղախով	խմ	1.76	48.45	85.27
	Ծածկեր			0.00	
108	Ավանդատների թաղածածկի միակոր քարերի քանդում վերաշարում հս-0.9, հվ-0.6	քմ	1.50	110.60	165.90
109	Հարթ երեսապատի մեծածավալ սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	0.90	68.41	61.57
111	Բազալտե սրբատաշ կիսաշրջանաձև եզրով հարթ երեսապատի քարերի նոր տաշ ու շար	Ք.մ	0.25	172.08	43.02
112	Ավանդատների թաղածածկի տակ փայտյա գլանաձև կաղապարամածի կապում և քանդում մինչև 4 մ բարձր	խմ	1.00	28.19	28.19
113	Ավանդատների թաղածածկի միակոր բազալտե քարերի նոր տաշ ու շար	քմ	2.10	267.51	561.77
115	2-րդ հարկի ավանդատների ներսի կոնաձև փորվածքով քարերի նոր տաշ ու շար	Ք.մ	0.90	314.06	282.65
116	Ավանդատների հարթ երեսապատի քարերի նոր տաշ ու շար	Ք.մ	1.00	145.51	145.51
117	Ավանդատների հարթ երեսապատի քարերի վերաշար	Ք.մ	0.20	44.55	8.91
121	Ներսում հարթ սրբատաշ բազալտե նախապես համարակալած քարերի քանդում վերաշարում	Ք.մ	1.80	68.41	123.14
139	Պատերի միջուկների ներարկում հատուկ բաղադրակազմի շաղախով	լիտր	1088.90	1.72	1868.05

142	Վերականգնվող շարվածքի քարերի մեջ ամցքերի շաղափում և Ø10 մմ ամրանավորման համար	100հատ	0.83	42.33	35.13
143	քարերի Ø8 մմ պողպատալարե ճարմանդներով ամրակապում լիցքին	կգ	16.40	0.12	2.04
157	Շին աղբի բարձում մեքենաները ձեռքի գործիքներով	խմ	2.10	0.82	1.73
158	նույնը՝մեխանիզմով	100խմ	0.15	105.27	15.79
75	Հին խիստ ամրացած կրաշաղախի քանդում հեռացում ձեռքի գործիքներով	խմ	2.17	17.77	38.56
76	Նոր լիցքի կատարում խամքարով՝ բարդ կրաշաղախով	խմ	2.20	48.45	106.58
	Ընդամենը				**11961.7**
	ԱԱՀ - 20%				2392.34
	Ընդամենը				**14354.1**

* Կապալառուն աշխատանքները կատարում է ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Մայրավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու տարածքում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ռ. Մայիլյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 2

«26» «09» 2019 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-1» *ծածկագրով պայմանագրի*

<u>1-ին չափաբաժին</u>

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքների կատարման

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Վերականգնողական աշխատանքներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից**	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ**

<u>4-րդ չափաբաժին</u>

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Մայրավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և ամրակայման աշխատանքների կատարման

N	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	**Վերականգնողական աշխատանքներ**	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ
ԸՆԴԱՄԵՆԸ		**Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից**	**Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո՝ 60-րդ օրացուցային օրը ներառյալ**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Ռ. Մայիլյան

(ստորագրություն)

Կ.Տ

Հավելված թիվ 3

«26» «09» 2019 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-1» *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազար դրամ

Աշխատանքի							
հրավերով նախա-տեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել ՀՀ 2019թ պետական բյուջեից՝ ըստ ամիսների, այդ թվում*				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45451600-8	Վերականգնողական աշխատանքներ (ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքներ)	3504.0	12264.0	17520.0	17520.0	17520.0
4	45451600-11	Վերականգնողական աշխատանքներ (ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Մայրավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և ամրակայման աշխատանքներ)	1992.0	6972.0	9960.0	9960.0	9960.0

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

(ստորագրություն) Ն. Հարությունյան

Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

(ստորագրություն) Ռ. Մայիլյան

Կ.Տ

Հավելված թիվ 4

«26» «09» 2019 թ. կնքված

«ՀՀՄՆ-ԳՀԱՇՁԲ-18/11-1» *ծածկագրով պայմանագրի*

<u>1-ին չափաբաժին</u>

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՀՆԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԴՎԻՆ ՀՆԱՎԱՅՐԻ ՄԻԱՆԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ Արարատի մարզի Հնաբերդ համայնքի Դվին հնավայրի միանավ եկեղեցու ամրակայման և վերականգնման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերը ու կոնստրուկցիաները պետք է ունենան երեք տարվա երաշխիքային ժամկետ:

<u>4-րդ չափաբաժին</u>

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍՈԼԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ՍԲ. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԱՄՐԱԿԱՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

ՀՀ Կոտայքի մարզի Սոլակ համայնքի Մայրավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու վերականգնման և ամրակայման աշխատանքների կատարման ընթացքում շինարարական նյութերը ու կոնստրուկցիաները պետք է ունենան երեք տարվա երաշխիքային ժամկետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
_____ Ն. Հարությունյան	_____ Ռ. Մայիլյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ